Արձանագրություն N 2

ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-26/36 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Շամուտ բնակավայրում Ստեփան Սարգսյանի անվան ըմբշամարտի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23.06.2026թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ Տ. Կոմիտասյան
Հ. Գինովյան
Ա. Քոչարյան
Ա. Երիցյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Ա. Զոհրաբյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտը բացվել է www.armeps.am կայքի միջոցով 2026 թվականի հունիսի 23-ին ժամը 10:30-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցե, կապի միջոց, էլեկտրոնային փոստի հասցե	Գնման գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Ք.Երևան, Արաբկիր, Սունդուկյան փող, տնակ 7, 101 բն. 043 067 009 engineering.group@internet.ru	1 300 000	1 300 000	-	1 300 000

1.2 Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատման մասին

(Ա. Զոհրաբյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակցի՝ «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Ա. Զոհրաբյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մասնակցի հայտը գնահատվել է բավարար:

3.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

4. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Զոհրաբյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

5. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Զոհրաբյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ _____ Տ.Կոմիտասյան

_____ Հ. Գինովյան

_____ Ա. Քոչարյան

_____ Ա. Երիցյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գ. Հակոբյան